ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 130

ք. Երևան 08.08.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար համակարգչային մոնիտորների, մոդեմների, դյուրակիր համակարգիչների, ձայնագրող սարքերի և այլ ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/9» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ֆուտբոլային դարբնոց» ՍՊԸ-ն /ՀՎՀՀ՝ 01068008, գործունեության հասցե՝ ՀՀ ք. Երևան, Մոլդովական փ./շ/50/4, (այսուհետ՝ Մասնակից):

Գնահատող հանձնաժողովի կողմից նշված ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած մասնակիցների հայտերի գնահատման նիստի ընթացքում՝ 25.06.2024թ, արձանագրվել է, որ Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը, 25.06.2024թ-ին նիստը կասեցրել է և առաջարկել Մասնակցին, հրավերով սահմանված ժամկետում և կարգով, շտկել անհամապատասխանությունները: Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է շտկումները, որոնք գնահատող հանձնաժողովը գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/9» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին չհամապատասխանող և մերժել է «Ֆուտբոլային դարբնոց» ՍՊԸ-ի հայտը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը, որոշում եմ՝ «Ֆուտբոլային դարբնոց» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ